սահմանիչ եւ կատարումն բոլոր էիցս, երիցս միակին, եզակի
եւ միաւոր ա՞ծութ՞ենն։ Որ անշարժ գոլով չարժէ զարարածս
ի կեանս և ի փրկութիւն էից էակն և կենդանեաց կեանքն։
Որ անփոփոխ գոլով միշտ յէութ՞ե, անեզր եւ անվայրափակ,
5 լերու�և բովանդակիչ ամենայնի եւ յամենայնս է եւ յամե-
նայնէ անհասէ։ Որպէս ի մասունս և ի բոլորս եւ ինքն ոչ
մասն և ոչ բոլոր, որպէս թէ զմասն և զբոլոր զամենայն ինքն
ունի և կրէ զամենայն արարածս բանիւ զաւրութ՞ե իւրոյ։
Գիրալիր գոլով լնու զամենայն եւ անհաս է յամենայնէ, որում
10 բան և իմաստութ՞ի և լեզու տուեալ բոլոր էիցս։ Ի բոլորիցս
հանցուք ա՞հութ՞ի եւ փառս հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։
այժմ և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Իսկ ի չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ
ինն ցուցմամբ տեսանի։ Զի ոմանք ասեն, թէ չորից աւետա-
15 բանչացն են չորք անկիւնք արարածոց. Արևելք, Արևմուտք,
Հիւսիս, Հարաւ, պարտ էր համասփիւռ քարոզել զաւետարանն։

Իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն
յաղենական աղբերէն յառաջ խաղաղացեալ առ ի տիեզերաց
ոռոգումն. Փիսոն, Գեհոն, Տիգրիս, եւ Եփրատէս. եւ սոցա
20 գոլով նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբե-
րէն ոռոգանել զպատքեալ միտս մարդկային բնութ՞ան։ Նոյն
աւրինակ ըստ տեսութ՞ենն Եզեկիէլի քառակերպեան աթոռոյ,
Մարդ, Առիւծ, Եղն, Արծիւ՝ զանմարմնոցն տ՞ր տեսանելով
բազմեալ ի փառացն աթոռ, իմանալի ցուցմամբ զինանս բոլոր
25 բնութ՞ան զակնարկումն։ Որ ա՞ծապէս եւ տիրաբար բերմամբ
նշանակէ զլինելն առ ի հողածինս հոգեղինացն անմահից զմահ-
կանացուս ունել հաղորդս, ուս(տ)ի գերակատարն հանեալ ի
ի փառս։ Վ՞ս զի փառաց թագաւորն ք՞ս փառակիցն հաւր
և հոգւոյն սրբոյ զմերս առ՞ել բնութիւն, ըստ ինքեան միա-
30 ցոյց ա՞ծութ՞ենն, ուսուցանելով մի որդի դաւանել, որ յա՞յ
հաւրէ եւ որ ի Մարիամայ սրբոյ կուսէ, անճառելի միաւո-
րութ՞եամբ, զոր աւետարանականն ուսուցանեն բանք, մինչ
ի կատարած հաւանութ՞ը, հաւատահաստատ կարգաւք, ի նոյն
յարելով յառաքելաւանդն քարոզութ՞ի։ Որ զ՞ածախաւան վար-
35 դապետութ՞ի դրոշմեալ զսակաւս առ ի բազմացն առ ի հա-
ւատալ, եթէ յ՞ս ք՞ն է որդի ՞այ. ըստ վեհին Յովհաննու
հաւատալ և զկեանսն յաւիտենականս ընդունել յանուն նորա։

Ուստի և տե՞սել զսորա անճառ փրկագործութ՞ենն խոր-
հուրդ, ա՞ծասէր և բարեպաշտուհի մահդասի կինն Գուլիա-
40 շէն եւ ետ գրել զ՞ք աւետարանս յիշատակ բարի հոգւոյ իւրոյ
և բարի ծնաւղաց իւրոց՝ հաւրն Մխիթարին եւ մաւրն . . . (բաց